

որ արդէն ինքնին անհնարին էր դարձնում կանոնաւոր կրթական գործ վարելը:

Վրաստանը, ճիշտ է, որ 1801 թ. միացուեց Ռուսաստանին, այսուհանդերձ այնտեղ էլ դեռ եւս չկար որեւէ արհեստավարներ:

Անգամ Ռուսաստանի հարաւում 19րդ դարի առաջի կէսին հիմնուած դպրոցները չունեցան այն յարատեւութիւնն ու յաջողութիւնը, որ ունեցաւ Լազարեան ձեմարանը:

Ի՞նչ վիճակում էին եւ ի՞նչ ճակատագիր ունեցան, օրինակ, Նոր-Նախիջևանի դպրոցը, որ հիմնել էր Յովսէփ արքեպ. Արղութեանը եւ հետագայում Գարրիէլ քահ. Պատկանեանի ուսումնարանը նոյն Նոր-Նախիջևանում, բացուած 40ական թուականներին. կամ Ս. Սաշի տպարանն ու դպրոցը նոյն Յովս. արքեպ. Արղութեանի կողմից ծնունդ առած. կամ Աստրախանի Ազարաբեանների դպրոցը, բացուած 19րդ դարի առաջին տասնամեակում եւ, վերջապէս, Թէոփոսի Սալիպեան ուսումնարանը, որի հիմը դրել էր Գարրիէլ արքեպ. Ալվազեանը 1858 թ. եւ որը փակուեց արդէն 1871 թուին...:

Ի հարկէ, չի կարելի ժխտել, որ այդ դպրոցները ժամանակին բերել են մեծ օգուտներ հայ մատաղ սերունդի կրթութեան գործին եւ առ հասարակ մեր ազգային մշակոյթին, բայց եւ չի կարելի չխոստովանել, որ նրանք չարդարացրին այն բոլոր յոյսերն եւ ակնկալութիւնները, որոնք կապուած էին այդ դպրոցների հետ եւ որ նրանց կրթական գերը եղաւ շատ սահմանափակ:

Այնուհետեւ գալով Անդրկովկասի մեր թեմական դպրոցներին, մենք կը տեսնենք, որ նրանք եւս չափազանց աննախանձելի վիճակ են ունեցել:

Այ. Երեցեանն ու Ստ. Մալխասեանը իրենց Ներսիսեան դպրոցի պատմութեամբ եւ Լէօն Երեւանի թեմական դպրոցի պատմութեամբ ցուցադրում են նրանց կեանքի մի պատկեր, որ խորապէս յուզիչ է...: Ի՞նչ տառապանքների, ի՞նչ զրկանքների, ի՞նչ ներքին ու արտաքին ցնցումների են ենթարկուած եղել նրանք իրենց ծննդեան օրից իսկ սկսած:

Ներքին անվերջ խռովութիւնները արգելք են եղել յարատեւ բնականոն կրթական կեանք ստեղծելուն այդ դպրոցներում...: Մի ներքին տագնապ յաջորդել է միւսին...:

Հողարարձութիւնների ու տեսուչների շարունակական ընդհարումներն ու պայքարները, որոնց հետեւանքով կրթական գործի պատասխանատու վարիչ-տեսուչները արագօրէն փոփոխուել են, հոգեւոր իշխանութեան եւ ապա ուսու բիւրոկրատիայի անտեղի ու բռնադրօսիկ միջամտութիւնները, աշակերտութեան բմբուսութիւնները տեսուչների եւ ուսուցիչների դէմ՝ անընդհատ խախտել են դպրոցի խաղաղ կեանքը, իսկ երբեմն էլ պատճառ եղել դպրոցի փակման տարիների ընթացքում...:

Լէօնի կարծիքով մեր թեմական դպրոցների տխուր վիճակի գլխաւոր պատճառը եղել է այն հանգամանքը, որ նրանք ծնունդ են եղել 1836 թ. «Պոլոթենիայի», իսկ այդ Պոլոթենեան «բացարձակապէս հոգեւորականութեան ձեռքն էր տուել Ռուսահայոց ազգային դաստիարակութիւնը եւ հայ հոգեւորականութիւնը հարիւրաւոր փաստերով ցոյց էր տալիս թէ որքան անօգնական եւ անկարող է նա այդ գերի մէջ»:

Արդ Լազարեանները, հիմնելով իրենց դպրոցը Մոսկուայում, ցանկացել էին խուսափել հէնց այդ հոգեւորականութեան միջամտութիւնից: Նրանք շատ լաւ ծանօթ էին¹¹, թէ ինչ է կատարուում Ս. Էջմիածնում 18րդ դարի վերջերքին, ինչքան անպահօժ էր Ս. Էջմիածնի վիճակը, նրանք գտնուում էին Դաւիթ-Դանիէլեան կաթողիկոսների կուռի տխուր օրերի ծանր տպաւորութեան տակ եւ հոգեպէս տառապում էին, տեսնելով թէ որքան մեծ փրկանք է կրում ազգն ու իրենց պաշտած հայ եկեղեցին...:

Եւ նրանք կամեցան միանգամայն գերծ պահել իրենց դպրոցը ամէն կողմնակի միջամտութիւնից, կամեցան միշտ իրենց աչքի առաջ ունենալ այն, վարել դպրոցական գործը իրենց հասկացողութեամբ, որը շատ աւելի բարձր էր, քան այն ժամանակի հայ կղերի կրթական գործի բմբուսումները: Եւ նրանք, իրօք, դրին ձեմարանի կրթական գործը այնպիսի բարձր մակարդակի վրայ, որ դարձաւ մի առաջնակարգ դպրոց նոյն իսկ

¹¹ Յայտնի է, որ Լազարեանները սերտ կապ էին պահպանում Ս. Էջմիածնի հետ եւ գտնուում էին մշտական թղթակցութեան մէջ: Այդ թղթակցութիւնից երևում է, որ նրանք լուսատեղեակ էին Ս. Էջմիածնի գործերի ու վիճակի մասին: Նրանց նամակների մի մասը մի փոքր մասն է, որ հրատարակուած են Ա. Երեցեանի «Կովկասահայք»ում եւ Գրիւտ աւ. քահ. Աղա՛նեանի «Դիւան Հայոց պատմութեան» մէջ:

ուսական դպրոցների շարքում. նրանք կամեցան ապահովել նրա իրաւական վիճակը, այնպէս, որ նա գերծ մնայ պատահականութիւններից ու ամէն կարգի ցնցումներից: Այս նպատակով տասնեակ տարիների ընթացքում նրանք մեծ ջանք թափեցին, մինչեւ որ հասան իրենց նպատակին ու տուին ձեմարանին հաստատուն դպրոցական ծրագիր եւ վարչական կանոնագիր, հաստատուած կառավարական բարձրագոյն իշխանութեան կողմից. վերջապէս, նրանք կամեցան պահել ձեմարանը իրենց անմիջական հսկողութեան տակ, որպէս զի կարողանան միշտ վերահասու լինել նրա կարիքներին ու պահանջներին: Եւ իրօք նրանք գուրդուում ու խնամում էին ձեմարանը որպէս մայրը իր որդուն, եւ անընդհատ մեծ գումարներ էին նուիրաբերում ձեմարանին լրացնելու նրա պահանջները, բաւարարելու նրա պահանջներին: Ո՞ւմ կարող էին նրանք վստահել այդ խոշոր գումարները, եթէ ձեմարանը հիմնուած լինէր Կովկասում կամ Անդրկովկասում:

Չէ՛, Լազարեանները իրենց պայծառատեսութեան ու իրատեսութեան մէջ չէին վրիպել, ընտրելով Մոսկուան, որպէս ձեմարանի վայր: Եւ կեանքն ու պատմութիւնը լիովին արդարացրին այդ ընտրութիւնը:

(Շարունակելի):

ՓՐԵՆՔՑ ՆԸՄՐԻ ՓԵՃԸ
Բ. ԿՈՒՍԵԿԵԼ ԼԻՔԵՆԵՆԻ
(1868—1873)
ԾԱԳՈՒՄՈՎ ՀԱՅ

60ական թուականներուն թուրք պետական պաշտօնէութեան մէջ կը գտնուէին կարգ մը Հայեր, որոնց անունէն կամ մականունէն դատելով կարելի էր կուսակցութիւնը հայտնաբերել: Այսպէս՝ Եւթիմ, Ֆայիզ, Արգուն, Տաւուս Փաշա, Ապուլլահ, Ալթուն Տիւրքի եւն եւն: Եւ սակայն ասոնք ամէնքն ալ ազգով հայ եւ բարձր պաշտօններ կը վարէին թուրք կայսերական պետութեան մէջ:

Տարակոյս չկայ թէ ժամանակակիցներուն ծանօթ էին անոնք եւ ոմանք ճանչցուած իրրեւ հայ: Բայց անոնցմէ ոմանք, ինչպէս նաեւ ուրիշներ իրենց անուան անսովոր ձեւին պատճառաւ ընդհանրապէս անծանօթ մնացած եւ մեր ազգայիններէն իրրեւ հայազգի չէին ճանչցուած:

Այդ շրջաններուն սովորական բան մըն էր, նոյն իսկ եւրոպացիներուն համար, որոնք իրենց եւրոպական անունը թրքականի մը հետ փոխանակելով՝ կը դառնային բոլորովին անծանօթ անձ մը: Ո՞վ կրնար կուսակցութիւնը իրրոքը կուսակալ Բիւքիս Փաշա, որ ատեն մը թուրք համարուեր (Փուլնջ, Կ. Պ. 1873, Թ. 778), յետոյ հայ կարծուեր (անդ՝ 1874, Թ. 917) էր՝ իտալացի եղած ըլլայ ծնունդով (անդ՝ 1874, Թ. 921):

Այս տեսակէտով հետաքրքրական է պարագան Լիւանանի երկրորդ կուսակալ եւ ընդհանուր կառավարիչ Ֆրանքո Փաշայի եւս, որուն անուան ձեւը — Ֆրանկո Նասրի Փաշա — պատճառ դարձած է իր ազգային ծագումի վրայ մթութեան քող մը ձգելու: Յետագայ գրութիւնս նուիրուած է լուսարանելու իր կեանքը, գործունէութիւնը եւ ազգային ծագումը:

Ա.
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳՏԵՐ

Ֆրանքո Նասրի Փաշայի ծնողքը Հալեպի են. ծնած է Կ. Պոլիս 1813ին (Մանգուլէի Էֆեար, Կ. Պ. 1873, Թ. 2102): Փուլնջի համեմատ (1873, Թ. 778) Սուրիա ծնած՝ յետոյ Պոլիս եկած է: Թէ ի՞նչ կրթութիւն առած է՝ անծանօթ կը մնայ: Նախ վաճառականի մը քով մտած է իրրեւ սպասաւոր (Փուլնջ, անդ): Յետոյ երիտասարդ հասակէն թուրք պետական ծառայութեան մէջ մտնելով՝ կարճ ժամանակէն սասիճանաբար բարձրացած է՝ վարելով կարգ մը պատասխանատու պաշտօններ, ինչպէս վիճարանական դրասենեակի սնորհէութիւն, խարիճիքեակի վարչութիւն, Բէյրութի մաքսատան տեսչութիւն եւն:

1860ի Լիւանանի խռովութենէն վերջ՝ կայսերական լիազօր Ֆուադ Փաշայի կրկնակրանայ գէպի Բէյրութ իրրեւ անդամ յատուկ Քնիւիջ Յանձնախումբի՝ իրեն յանձնուած գլխաւորաբար Օղնութեան Գործի կազմակերպութիւնը:

Պոլիս վերադարձին՝ անուանուած է հե-
ռագրութեան տնօրէն եւ Ղալաթիոյ մաքսա-
տան տեսուչ:

1868ին, Տաւուս Փաշայի հրատարուած էն
յետոյ, Լիբանանի կուսակալ կ'ընտրուել
10 տարուան համար, զոր կը վարէ յաջողու-
թեամբ եւ ընդհանուր զոհունակութիւն
պատճառելով:

1872ին կը հիւանդանայ սակայն եւ ամիս-
ներով Բէյրութի մէջ տառապելէ վերջ՝ 1873
Յունուար 30ին կը կնքէ մահկանացուն:

Մարմինը կը թաղուի Լեռնալիբանանի
վերաբերեալ ճիտտէ գաւառին մէջ:

Ֆրանքո Փաշա կրօնքով կաթողիկէ էր
(Richard Edwards, La Syrie, 1862,
էջ 204): Ամուսնացած եւ բազմաթիւ զաւակ-
ներու հայր (Մանգ. Էֆֆէար, անդ): Գիտէր
5—6 լեզու (La Syrie, անդ՝ էջ 206): Յա-
մառ աշխատանքով եւ միայն անձնական ար-
ժանիքով՝ հասարակ վիճակէ մինչեւ միւ-
շիւրութեան բարձրագոյն պատուոյն հա-
սած էր:

Բ:

ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆԸ

Ֆրանքո Փաշայի առած կրթութիւնը եւ
ուսման աստիճանը անձանօթ է մեզ: Փուլնջի
(Կ. Պ. 1873, թ. 778) ըսածին նայելով «քիչ
ժամանակի մէջ բարձրացած է ստորին վի-
ճակէ»։ «վաճառականի մի քով սպասաւոր
էր՝ երբ կառավարական գործոց մէջ մտաւ»։
Որմէ յայտնի կ'ըլլայ թէ նա ինքնաշխատու-
թեամբ ու յարատեւ ջանքերով բարձրացած
է: Չայս կը հաստատէ Richard Edwards (La
Syrie, էջ 206) ներկայացնելով զինքը իրրեւ
Ֆուադ Փաշայի ամենավստահելի անձինք-
ներէն մին եւ անոր կազմած Յանձնախումբ-
րին կարեւորագոյն մէկ անդամը. Franco-
Effendi, directeur du bureau du Contentieux
à la Sublime Porte, qui s'est élevé par
son seul mérite à ce poste élevée:

Ֆրանքո Նասրի կարգ մը պետական
պաշտօններ առժամանակեայ կերպով վարելէ
վերջ՝ եղած է արտաքին գործոց նախարարու-
թեան մէջ քարտուղար (Մանգ. Էֆֆէար,
անդ՝ թ. 2102), վարած է Բէյրութի մաքսա-
տան տնօրէնութիւնը (անդ) «եւ ուրիշ այս-
պիսի կարեւոր պաշտամանց մէջ գտնուած»
(Փուլնջ, անդ՝ թ. 778) է 1860էն առաջ:

Լեռնալիբանանի 1860ի ծանօթ գէպքե-

րուն առթիւ Ֆուադ Փաշայի կ'ընկերանայ
Սահակ Ապրոյի հետ (Արշալոյս Արարտեան,
Զմիւռնիա 1860, թ. 627) իրրեւ օգնութիւն
բաշխող կարօտեաններու եւ փախստական-
ներու (La Syrie, էջ 204): Ֆուադ Փաշա
իրեն կը յանձնէ նաեւ լեռան շէյխերն ու
գիւղացիները իրարու հետ հաշտեցնելու
դժուարին ու փափուկ գործը (La Syrie,
էջ 206): Իր ջանքերը լաւ արդիւնքով կը
պսակուին (անդ՝ էջ 208):

1860 սեպտեմբերին «անձնական տկա-
րութեան» (Արշ. Արարատ, թ. 632) պատ-
ճառաւ իր պաշտօնը Ստեփան Արգուճա-
նեանի կը յանձնուի, իսկ ինքը Պոլիս կը վե-
րագանայ: Հոս իրեն կը վստահուի Ղալաթիոյ
մաքսատան տնօրէնութիւնը: Երբ Տաւուս
Փաշա Լիբանանի կառավարիչ կ'ընտրուի՝
Ֆրանքոյի կը յանձնուի նաեւ հեռագրատանց
վերատեսչութիւնը Միւրեմայիգիի աստիճա-
նով (Արշ. Արար., 1861, թ. 652. Մասիս,
Կ. Պ. 1861, թ. 489): Այս պաշտօնի գոր-
ծերը կը վարէ նա մինչեւ 1861 նոյեմբեր
(Արշ. Արարատ, թ. 662):

1862ին պետական Գննիչ Յանձնախումբի
մը անդամ է (Արշ. Արարատ, թ. 666):

1868ին Գրիգոր Ազաթոնի թաղման ներ-
կայ է եւ դադարի ծոյղ բռնող Գր. Օտեանի,
Յովհ. Չամիչի, Ս. Համամեանի եւ Դոկտ.
Սերվիլիէի հետ (անդ՝ թ. 832):

Նոյն տարի Մայիսին Լիբանանի կուսա-
կալ կ'ընտրուի եւ կը ստանայ փաշայութեան
ու միւշիւրութեան աստիճանները (Փուլնջ,
1868, թ. 153. Արշ. Արար., թ. 831): Մէն-
մուայը Հավատիս (Կ. Պ. 1868, թ. 749) կը
տեղեկագրէ որ Ֆրանքո Փաշայի ընտրու-
թիւնը ուրախութիւն պատճառած է Լեռնա-
լիբանանի բնակչութեան:

Այս առթիւ Մասիս (1868, թ. 858) կը
գրէ. «Լիբանանու նորընտիր կառավարիչ
Վսեմ. Ֆրանքո Նասրի Փաշայի կառավարու-
թեան պայմանաժամն որոշելու համար կազ-
մուած գեսպանաժողովը Բարձ. Ֆուադ փա-
շային Գանլըճայի ապարանքն երեք անգամ
նիստ ընելէ ետեւ իր գործը վերջացուց եւ
անցեալ երկուշաբթի օրը գաշնագիր մը ստո-
րագրեց որով Վսեմ. Ֆրանքո Փաշան մինչեւ
10 տարի Լիբանանու կառավարիչ կ'ընդու-
նուի» (Հմմտ. այս մասին Ֆուադ Փաշայի
հեռագիրը՝ Le Baron J. de Testa, Recueil
des traités de la Porte Ottomane. Tome 8. Paris
1894, էջ 198 եւ Մէնմ. Հավ., անդ՝ 753):

Ֆրանքո Փաշա պատիւ կ'ունենայ ներ-
կայանալու Սուլթանին (Փուլնջ, թ. 157. Արշ.
Արար., թ. 833) եւ Յունիս 6ին (հ. տ.)
Փրանսական շողեւաւով կը մեկնի իր պաշ-
տօնատեղին (Փուլնջ, թ. 168):

Լիբանանի ժողովուրդը, որ մէկէ աւելի
անգամներ առիթ ունեցած էր նախապէս
ճանչնալու եւ զնահատելու Ֆրանքո Փաշայի
արժանիքները՝ արժանաւոր ընդունելութիւն
մը կը պատրաստէ անոր դալատեան: Ժամա-
մը կը պատրաստէ անոր ժողով մը (Փուլնջ,
1868, նահակից հայ թերթ մը (Փուլնջ, 1868,
թ. 181) կը գրէ այս մասին Յունիս 9 թուա-
կանով. «Լիբանանու նորընտիր կառավարիչ
Ֆրանքո փաշան Պէյրութ հասեր եւ կայսե-
րական զօրաց կողմանէ նուազարաններով ու
թնդանօթներով ողջունուեր է: Նուահան-
գիսաւ Պէյրութի Միւթէսարըֆն եւ կառա-
վարութեան պաշտօնատան մէջ ընդհանուր
կառավարիչն զինքը զիմաւորեր են: Բիւժ մը
հանգստանալէն ետքը, հիւպատոսք եւ երե-
ւելի անձինք այցելութեան եկեր են: Անկէց
իւր պաշտօնատեղին Պէյթէտտին հասնելով՝
կայսերական հրովարտակը կարգացուեր է
մեծ հանդէսով» (Հմմտ. Մէնմ. Հավ.,
թ. 751):

Պաշտօնավարութեան անցնելէ քանի մը
ամիս վերջ Մէնմ. Հավատիս (թ. 758) կը տե-
ղեկագրէ որ քանի մը տեղական կառավա-
րիչներ ու պաշտօնեաներ միայն փոփոխեց.
ամբողջ Լեռնալիբանանի ժողովուրդը խա-
ղաղութիւն ու հանգստութիւն կը վայելէ:

La Turquie թերթը 1868 սեպտ. թուով
կը ծանուցանէ որ Հայ կաթողիկէներու
Պատրիարք Գեր. Հասուն Իսկենտերուհէն
Բէյրութ անցած ըլլալով՝ փրանքո Փաշա
անոր այցի կ'երթայ եւ ժամերով կը տեսակ-
ցին իրարու հետ (Մէնմ. Հավ., թ. 761):
Լեռան իշխաններէն Եուսուֆ Բերամի
թէեւ կը փորձէ ժողովուրդը զրգուել Ֆրանքո
Փաշայի դէմ, սպստամբութիւն սարքելով
(Փուլնջ, 1869, թ. 264), սակայն ձեռք առ-
նուած խիստ միջոցներով եւ զինքը երկրէն
վտարելով՝ խնդրութեան առջեւ կ'առնուի
(անդ, թ. 454):

Բարձ. Դուռը զնահատելով Ֆրանքո փա-
շայի ջանքերը՝ կը պատուէ զինքը առաջին
կարգի Մէնիսիէ պատուանշանով (Փուլնջ,
թ. 392. Արշ. Արար., 1869, թ. 865): Նոյն-
պիսի պատիւ մը կ'ընդունի նաեւ Ռուսաց
կայսրէն: «Ռուսաց օգոստ. կայսրը», կը գրէ
Արշ. Արարատեան (1870, թ. 898), «հաճե-

ցաւ սրբոյն Սթանիսլաւի կարգին առաջին
աստիճան չքանչանաւ պատուել զՎսեմ.
Ֆրանքո փաշան, որ Լիբանանու ընդհանուր
կառավարիչն է»:

1871ի շրջանին Լեռնալիբանանի բարե-
գարգուութեան համար կարգ մը կարեւոր շի-
նութիւններու կը ձեռնարկէ. Պահպտա եւ
Սիպնէ երթալով պողոտան սալարկել կու-
տայ. աւազին առջեւ թուճը կանգնելու հա-
մար՝ ծովեզերքը եղէգ կը տնկուի (Մէնմ.
Հավ., 1871, թ. 896). նոյնպէս ուրիշ շատ
մը ճամբաներ ու ժողովուրդին համար օգ-
տակար բաներ շինել կու տայ (Մանգ. Էֆ-
ֆէար, 1873, թ. 2102): Թէ՛ այսպիսի շինա-
բարութիւններով եւ թէ՛ հանրութեան օգտին
համար թափած ջանքերով ժողովուրդին
սէքն ու համակրանքը կը շահի (Փուլնջ,
1873, թ. 778): Մանգուսէի Էֆֆէար (անդ՝
թ. 2102) կ'ըսէ որ Լեռնալիբանանի մէջ չկար
մարդ մը, որ զոհ եղած չըլլար:

1872 Յունուարին հրաման կը ստանայ
ժամանակուան մը համար մայրաքաղաք
(Կ. Պ.) դառնալու (Փուլնջ, 1872, թ. 707.
Սէտայը Հագրգէթ, Կ. Պ. 1872, թ. 189,
190). կ'երեւայ թէ հիւանդութեան մը
սկզբնաւորութիւնը դարմանելու համար էր:
Թէեւ կը վերադառնայ իր պաշտօնին՝ սա-
կայն նոյն տարի նոյեմբերին կաթուածի մը
հետեւանքով կուրծքի հիւանդութեամբ պառ-
կած է եւ ծանր վիճակի մէջ կը գտնուի
(Փուլնջ, թ. 757. Սէտայը Հագրգէթ,
թ. 308): Բէյրութէն արուած հեռագրի մը
կարճատեւ բարեօրումի լուրէն (Փուլնջ,
թ. 758) քիչ վերջ Փուլնջ (1873, թ. 772 յու-
նուար 12) կը ծանուցանէ թէ «Լիբանանու
կառավարիչ Ֆրանքո Փաշա անձնական տկա-
րութեան պատճառաւ մայրաքաղաքս դալու-
թեան համար ճամբայ ելեր է, եւ կառավարական
գործերն տեղւոյն ժողովոյն յանձնուեր են»:
Ըստ Սէտայը Հագրգէթի (թ. 315) կա-
թուածի հետեւանքով լեզուն բռնուեր է եւ
Պոլիս պիտի գայ:

Հաւանաբար Ֆրանքո Փաշա Պոլիս եկած
է, այլ Բէյրութ մնացած է: Հակառակ տա-
րուած խնամքներուն՝ չեն կրցած հիւանդու-
թիւնը բուժել (Մանգ. Էֆֆ., թ. 2101):

1873 Յունուար 30ին, Բէյրութ, 60 տա-
րեկան հասակի մէջ կը վախճանի (Փուլնջ,
1873, թ. 778. Մանգ. Էֆֆէար, 1873,
թ. 2101. Մասիս, 1873, թ. 1345): Իր մահը

